ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2019/38

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝

«Գդակ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Տեր-Վարդանյանի,

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ՝ Վ. Մահտեսյանի, Ա. Ասատրյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Գդակ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 10.06.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և 1 և 2 չափաբաժինների մասով «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումները:

2. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ 1 և 2 չափաբաժինների մասով մերժել «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի հայտը:

Բողոքներ քննող անձի 11.06.2019թ.-ի որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 14.06.2019թ.-ին և 25.06.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 25.06.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 03.07.2019թ.-ին:

1. <u>«Գդակ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Բողոքաբերը բողոքով հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 9 րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի

հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Նույն կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Նույն կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Դրա հետ մեկտեղ, Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում: Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման ...:

Իսկ հրավերի նույն կետի 7.4 ենթակետի համաձայն՝ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր: Հայտի ապահովումը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

«Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթին 16.05.2019թ. մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին ներկայացվել է «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի կողմից 16.05.2019թ.-

ին տրամադրված թիվ 1328/1015 և 1329/1015 բանկային երաշխիքները, որոնց 5-րդ կետի համաձայն՝ երաշխիքը գործում է մինչև 14-ը օգոստոս 2019թ.-ը ներառյալ:

Այսինքն «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի կողմից 16.05.2019թ.-ին տրամադրված թիվ 1328/1015 և 1329/1015 բանկային երաշխիքները գործում են, այսինքն վավեր են՝ 16.05.2019թ. մինչև 14.08.2019թ., որը ստացվում է ընդամենը մոտ 63 աշխատանքային օր (մոտ 88 օրացուցային օր), սակայն ոչ մի դեպքում ոչ 90 (իննսուն) աշխատանքային օր, ինչպես դա պահանջում է հրավերը:

Շարադրված փաստերից ուղակի երևում է, որ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, քանի որ դրան վավեր են հրավերով պահանջված 90 (իննսուն) աշխատանքային օրից պակաս, հետևաբար հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից չէր կարող բավարար գնահատվեր՝ այն էլ հիմնավորվեր, որ համապատասխանում է հրավերի պահանջներին:

Բողոքաբերը գտնում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը բավարար գնահատելով «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի հայտը, և մասնավորապես բանկային երաշխիքները, խախտել է թե «Գնումների մասին» ՀՀ օրենքի, և թե ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի վկայակոչված կետերը:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է՝

1. Դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և 1 և 2 չափաբաժինների մասով «Տեքսուորլդ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումները:
2. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ 1 և 2 չափաբաժինների մասով մերժել «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի հայտը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 11.06.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Գդակ»

ՍՊԸ-ի կողմից 10.06.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն դիրքորոշմանը կից ներկայացնելով բողոքի քննության համար նշանակություն ունեցող բոլոր փաստաթղթերի պատճենները, հայտնել է հետևյալը.

«<Գնումների մասին> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Նույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտը, որը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պարունակում է նաև հայտի ապահովումը, վավեր է մինչև սույն օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, մասնակցի կողմից հայտը հետ վերցնելը, հայտի մերժումը կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելը: Նշված դրույթը ներառված է նաև վերոհիշյալ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում:

Այսինքն վերոհիշյալ նորմերի ուժով հայտի ապահովման գործողության ժամկետը պետք է պակաս չլինի <Գնումների մասին> ՀՀ օրենքին համապատասխան պայմանագրի կնքման, մասնակցի կողմից հայտը հետ վերցնելու, հայտի մերժելու կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու ժամկետից:

Միաժամանակ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված են մասնակիցների հայտերի գնահատման, հաղթող մասնակցին որոշելու, անգործության, պայմանագիր կնքելու առավելագույն ժամկետները, որոնք հրատապ բաց մրցույթի դեպքում գումարային արտահայտությամբ կազմում են 80-82 օրացուցային օր:

Վերոհիշյալ գնման ընթացակարգի մասնակից <Տեքսուորլդ> ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է 2019 թվականի մայիսի 16-ին, որից 82 օրացուցային օր հաշվելով ստացվում է 2019 թվականի օգոստոսի 5-ը, իսկ վերջինիս հայտի ապահովումը գործում է մինչև օգոստոսի 14-ը ներառյալ: Այսինքն ներկայացված հայտի ապահովման ժամկետը ամբողջությամբ բավարար է մինչև պայմանագիր կնքելը մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման դեպքում այդ հայտի ապահովումը գանձելու համար, հետևաբար ամբողջությամբ ապահովում է մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումը:

Ելնելով վերոգրյալից, հայտնում եմ, որ ներկայացված հայտի ապահովումը համապատասխանում է հրավերի պահանջներին, ինչով պայմանավորված գնահատող

հանձնաժողովը հիշյալ մասնակցի հայտը գնահատել է բավարար՝ տվյալ դեպքում գործելով իրավաչափ:

Հայտնում եմ նաև, որ վերոհիշյալ ծածկագրով գնման ընթացակարգին մասնակից <Տեքսուորլդ> ՍՊԸ-ի և <Գդակ> ՍՊԸ-ի գնային առաջարկների տարբերությունը կազմում է 13 488 000 ՀՀ դրամ:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/38 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար վրանների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Գդակ» ՍՊԸ-ն և «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), 17.05.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Հանձնաժողովի 05.06.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը գնահատվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՅԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան և վերջինիս հայտարարվել է ընտրված /հաղթող/ մասնակից և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթին 16.05.2019թ. մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին ներկայացվել է «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի կողմից 16.05.2019թ.-ին տրամադրված թիվ 1328/1015 և 1329/1015 բանկային երաշխիքները, որոնց 5-րդ կետի համաձայն՝ երաշխիքը գործում է մինչև 14.08.2019թ.-ը ներառյալ (90 (իննսուն) օրացուցային օր):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Գդակ» ՍՊԸ-ի կողմից 10.06.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է հայտի ապահովումը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով հայտի ապահովման շտկման հնարավորություն:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար վրանների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 17.05.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

«Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթին 16.05.2019թ. մասնակցության հայտ ներկայացնելիս՝ որպես հայտի ապահովում, գնահատող հանձնաժողովին ներկայացվել է «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի կողմից 16.05.2019թ.-ին տրամադրված թիվ 1328/1015 և 1329/1015 բանկային երաշխիքները, որոնց 5-րդ կետի համաձայն՝ երաշխիքը գործում է մինչև 14.08.2019թ.-ը ներառյալ (90 (իննսուն) օրացուցային օր):

Հանձնաժողովի 05.06.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը գնահատվել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՅԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան և վերջինիս հայտարարվել է ընտրված

/հաղթող/ մասնակից և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Նույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտը, որը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պարունակում է նաև հայտի ապահովումը, վավեր է մինչև սույն օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, մասնակցի կողմից հայտը հետ վերցնելը, հայտի մերժումը կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելը: Նշված դրույթը ներառված է նաև վերոհիշյալ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերում:

Այսինքն վերոհիշյալ նորմերի ուժով հայտի ապահովման գործողության ժամկետը պետք է պակաս չլինի Օրենքին համապատասխան պայմանագրի կնքման, մասնակցի կողմից հայտը հետ վերցնելու, հայտի մերժելու կամ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու ժամկետից:

Միաժամանակ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված են մասնակիցների հայտերի գնահատման, հաղթող մասնակցին որոշելու, անգործության, պայմանագիր կնքելու առավելագույն ժամկետները, որոնք հրատապ բաց մրցույթի դեպքում կազմում են ոչ ավել քան 90 օրացուցային օր:

Վերոհիշյալ գնման ընթացակարգի մասնակից «Տեքսուորլդ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է 2019 թվականի մայիսի 16-ին, իսկ վերջինիս հայտի ապահովումը գործում է մինչև օգոստոսի 14-ը ներառյալ: Այսինքն ներկայացված հայտի ապահովման ժամկետը ամբողջությամբ բավարար է մինչև պայմանագիր կնքելը մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման դեպքում այդ հայտի ապահովումը գանձելու համար, հետևաբար ամբողջությամբ ապահովում է մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Տեքսուորլդ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և վերջինիսի առաջին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումն իրավաչափ է և բխում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից և միտված է եղել ապահովելու գնումների և գնումների

գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացմանն ու պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Գդակ» ՍՊԸ-ի կողմից 10.06.2019թ. ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**